

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱԿՆԵՐԸ

Եւրոպացիք լայնօրէն օգտագործում են ազգանունը: Անունը ֆրանսացոց մէջ այնքան անարժէք բան է, որ անուն ասելով հասկանում են ազգանուն, իսկ անուն համար գործ են ածում փոքր անուն (petit nom): Մի անձ կարող է ունենալ 3-4 անուն, բայց միայն մի ազգանուն: Այսպէս Փարիզի իմ դասընկերներից յիշեմ՝

- Edouard - Marie - Antoine - Aude.
- Louis - Marie - Jean - Bodin.
- Lucien - Etien - Albert - Broche.
- Charles - Jean - Marie - Brou.
- Pierre - Paul - Narcisse - Fernand - Chilot.
- Joseph - Jean - Baptiste - Vendryès.

Այս ընդհանուր ծանօթութիւններից յետոյ մասնաւորինք մեր խօսքը հայոց ազգանունների վրայ:

Հին հայոց մէջ հասարակ ժողովուրդը երեւի գործածում էր անուն-հայրանուն. իսկ ազնուականները կրում էին ազգանուն: Ազգանունները հնագոյն շրջանում ձեւաւում էին ունի մասնիկով, որն աւելի ուշ դարձաւ եան. 6րդ դարում հայերը պարսիկներից վերցնում են յոգնակի ան, եան (յան) մասնիկը և դարձնում են նրանց

նման ազգանուն, նոյնիսկ իրաֆիթի պարսկական օրէնքով, ներսէս կաթողիկոսի գրած թղթի մէջ ստորագրում են ի միջի այլոց հետեւեալ իշխանները.

- Համազասպ ի Գուգվառամեան
 - Սամէղ յԱրտաւազգան
 - Գրիգոր ի Հմայական
 - Սահակ ի Վարդանան
 - Դատոյ ի Գարջուղեան
 - Զաւրակ ի Կաղաւոնան
 - Վարազ-Յոհան ի Յոհանան
 - Վարդան ի Մուշեղեան
 - Սահակ ի Հմայակեան
 - Աշոտ ի Վարազտիրոցեան
 - Մուշեղ ի Հմայեկեան
 - Վրիւ յԱրտաշրան
 - Սահակ ի Մանուէլեան և այլն և այլն:
- (Գիրք թղթոց, էջ 74):

Սա պարսկական ազդեցութեան շնորհիւն է: Արարների ժամանակ ազգանունները վերանում են, ըստ որում իշխանական ցեղերը ջնջւում են: Աւելի ուշ՝ թուրքերի ժամանակ, նոյնպէս ազգանուն չկայ: Տաճկաստանում, իմ մանկութեանս ժա-

իր արշաւանքներու ընթացքին: Պարսից Մոցի մէջ հսկայ նաւատորմիւ մը պատարաստեց, որ իր բանակները փոխադրեց Արաբական երկիրներ: Տեղ ցեղի ետեւէ ճըզմուեցան: Պարտաւածներուն մեծամասնութիւնը սուրէ անցնել տուաւ, իսկ զերի բանաւածներուն իւրաքանչիւրին ուարձակել տուաւ և չուան մը անցնելով քաշկըտտեցին տարին զերութիւն (1):

Այս յաղթութեան համար Շապուհին, որպէս պատուանուն, կոչեցին Ջուլաֆրաֆ, Ուսերու Տէրը (2):

Յաղթական բանակ մը իր հրամանին

աակ, և Պարսիկ ժողովուրդի իրեն հանդէպ տածած խանդավառ ոգևորութիւնէն զօտեպնդուած, երիտասարդ Արքային փառասիրութիւնը նորանոր նուաճումներու ծրագիրներով կը խթանէր իր անհանդարտ և անհամբեր միտքը:

Շապուհի համար, ինչպէս բոլոր Սասանեան թագաւորներու, առաջին ռիսերիմ թշնամին Հոսմէական կայսրութիւնն էր: Պարսկաստանի արևելեան և հիւսիսային սահմաններէն անդին մէկէ աւելի բարբարոս ցեղեր կը գտնուէին, որոնք յաճախ պետութեան կեանքը կը վրդովէին, բայց, որքան ալ փորձանաւոր, անոնցմէ եւ ոչ մէկը կրնար բաղդատուիլ Արեմուտքի հզօրագոյն կայսրութեան հետ:

(1) Mirkhond, էջ 309.
(2) Malcolm, Vol. 1. էջ 107.

ՀՐԱՆԴ Գ. ԱՐՄԷՆ

Շարունակելէ (3)

մանակ, հայրանունն էր միայն գործածուում ազգանունան ձևով. օրինակ՝ ես զբարոցում արձանագրուած էի Հրաչեայ Յակոբեան (հօրս անունով) և խօսակցութեան մէջ յաճախ կրճատ ձևով ասում էին Հրաչեայ Յակոբ: 1888 թուականին զպրոց մտաւ ազգանունան զրութիւնը: Հոգաբարձութիւնը պատուիրեց բոլորիս, որ տուն գնանք և մեր ծնողներին հարցնելով ու իմանալով՝ ազգանուն բերենք: Ընդհանրապէս աշակերտները իրենց պապի անունը զարձրին ազգանուն, ուրիշներ մի ինչոր մականուն և այլն: Հետաքրքիր է իմ ազգանունան պատմութիւնը: Ես տուն գնացի և հարցրի, թէ մեր ազգանունը ի՞նչ է: Հայրս առաջարկեց վերցնել իր հօր անունը՝ Յարութիւն և կոչուել Յարութիւնեան: Ես այն ժամանակ 12 տարեկան էի, բայց արդէն ունէի ինչոր լեզուական ճաշակ: Իմ ճաշակով անունից կազմուած ազգանունը հաճելի չէր. ուստի մերժեցի Յարութիւնեանը և ուրիշ բան ուզեցի: Հօրաքոյրս ասաց, որ իրենց ցեղը Ռոտոսթոյում կոչուել է Հիւպրուօ օղլու, ուստի առաջարկեց զրել Հիւպրուօեան: Ես այն ժամանակ Հիւպրուօ բառի ծագումը չգիտէի. չգիտէի, թէ զա էլ անուն է Հիւպրիօ, որ շատ քիչ է գործածուում: Երեւանում մի քանի տարի առաջ եղել է Հիւպրիօ անունով մէկը: Ես չհաւանեցի նաև Հիւպրիօեան ազգանունը և մերժեցի: (Կոստանդնուպոլսում մականունը յաճախ չփոթում են ազգանունան հետ և փոխանակ ստելու ազգանուն, ասում են մականուն, թուրքերէն լազապ, այսինքն փուտանուն): Ես հօրս հարցրի, թէ քեզ ի՞նչ ծաղրական անուն են տալիս. նա ասաց՝ «Ինձ ասում են Կոնիկ Ակոբ»: Ես հաւանեցի այս անունան և վերցրի Կոնիկեան ազգանունը, որի իմաստը անձանօթ էր: Ներկայացայ հոգաբարձութեան և ասացի, թէ իմ ազգանունն է Կոնիկեան: Հոգաբարձուներից մէկն ասաց, թէ Կոնիկ բառ չկայ, պէտք է լինի Կոնիկ և ազգանունն չինեց Կոնիկեան: Մի ամբողջ տարի զպրոցում կրեցի Կոնիկեան ազգանունը: Ընկերներս շարունակ ծաղրում էին ինձ կոչելով կոնիկ, մոնիկ, սոնիկ, խոնիկ, բոնիկ: Տարին լրացաւ, տարրական դըպրոցը աւարտեցի և մտայ միջնակարգ: Ես կոնիկից, ձանձրացած, որոշեցի փոխել

ազգանունս: Կոնիկ բառի զբարբն է աճառ, որ ինձ շատ բարեհնչուն թուաց և ազգանունս զարձրի նոր զպրոցում՝ Աճառեան, որ ընդունեց նաև հայրս:

Մրանից 42 տարի առաջ, էջմիածնի ձեմարանում, երբ ես այս գէպքը պատմեցի, Մանուկ Արեղեանը ասաց ծիծաղելով. «Մի տաճկահայ չտեսանք, որ շինծու ազգանուն չունենար»: Ծիշու է, բայց Արեղեանի ազգանունն էլ շինծու է: Նա նախապէս կոչուել է Աղբելեան, այսինքն թուրքերէն բառով «սպիտակ րեղաւորեան»: Արեղեանը անդուրեկան է գտել իրաւամբ Աղբելեանը, միջից դ կտրել է և զարձրել է Աբելեան, որ հին հայոց նախարարական սոնմերից մէկի անունն է:

Ես անհատական մի գէպք պատմեցի. բայց զա ցուցանիչն է մեր հասարակական երեւոյթներից մէկի: Հայրանունից ազգանունան անցնելը մեր յառաջադիկան քայլերից մէկն էր:

Այսօր մեր մէջ ամէն տեղ ազգանունը ընդունուած է, պետականօրէն ճանաչուած և հաստատուած մի բան է, որ կարելի չէ ուզած բողբէին այնպիսի հեշտութեամբ փոխել:

Մեր ազգանունները կազմուած են 4 ձևով:

Առաջինն է անունով ազգանուն. այսպէս Յովնանեան, Գրիգորեան, Կարապետեան, Ներսէսեան և այլն: Մրանց հետ կարելի է գնել Տէր կամ Մելիփ ձևով ազգանունները. ինչպէս՝ Տէր-Կարապետեան, Տէր-Գրիգորեան, Տէր-Յովնանեան, Տէր-Մարտիրոսեան կամ Մելիփ-Աբրահամեան, Մելիփ-Շահնազարեան, Մելիփ-Փարսաղանեան և այլն: Այս բոլորը կազմուած են առաջին անգամ մէկի պապի և կամ պապի հօր անունով: Դրանք բոլորն էլ ուշ ժամանակի արտագրութիւն են. ուստի չենք գտնում նրանց շարքում Հրաչեայեան, Արսաւազեան, Վառապապուհեան, Մերուժանեան և նման ազգանուններ, որովհետև այդ անունները շատ հին են:

Այսպիսով անունով ազգանունները կազմուած են քնականարար արական զծով. բայց կան ազգանուններ էլ, որոնք կազմուած են իրական անուններից: Այսպէս Մանանդեան կազմուած է Մանանդ անունից, որ կոնջ անուն է: Նոյնպէս Նայունց, Շուսանեան: Լինում են ընտանիքներ, ուր

կինը աւելի ազդեցիկ անձնաւորութիւն է լինում, քան տղամարդը. այս դէպքում սասում են ոչ թէ Կարապետի կամ Գրիգորի տղան, այլ Մարիամ բաշու կամ թափու խանութի տղան և այլն: Այսպիսով ձեւանում է իրական անունից ազգանուն:

Ազգանունների երկրորդ ձեւն է վուսանունով կամ մականունով կազմուած ազգանուն: Մէկին տուել են մի ծաղրանուն, այդ ծաղրանունը անցել է որդիներին և կազմուել է ազգանուն: Այսպէս են օրինակ՝ Երկայնեան (կամ Թուրքերէն Ազունեան), Կարնիկեան, Կոլոսեան, Շիրինեան (քաղցր), Գարապետեան (սև ունքերով), Ղարաօզեան (սև աչքերով), Թօփալեան (կաղ), Չուլախեան (թելը կտորած), Տեպետեան (թափթփած), Խաչանեան, Պուռնազեան (մեծ քթով), Չորանեան (ժլատ մարդ է եղել, որ միայն չորթանով է ապրել), Գերվիտեան (անփոյթ): Այս կարգի ազգանունները երբեմն գործը անհամութեան են հասցնում. օրինակ՝ զրականութեան մէջ յայտնի է պուսեցի կաթուղի մի վարդապետ՝ Պոյնուէրիեան (վիզը ծուռ), Եղուկիայում կար Եղղղղղղղղղղեան (իւրա խմորեղէն չուտողեան): Նշանաւոր են նոր-նախիջեւանցիք իրենց տարօրինակ, յաճախ անվայել ազգանուններով. ինչպէս՝ Չարապետեան (զուլսը ճղուած), Խապախապետեան (զգուժուլտեան), Այուեան (արջեան), Թիլիեան (աղուեսեան), Բուղայեան (ցուրեան), Թացիտեան (քիթը միշտ վազել է, չորի ծայրով սրբել է, անունը զրել են Թացիտեան): Մի փաստարան կար Փարֆեան (փորը միշտ քշել է), մի դերասանուհի կար Գոլոսեան, մնացեալը քաղաքավարութեան սահմանից բոլորովին հեռանում է: Ինչպէս նկատուում ենք՝ այս ազգանունների մեծ մասը թուրքերէն է:

Ազգանունների երրորդ ձեւն է բնավայրով, երկրի անունով ազգանուն: Այսպէս ունենք Վանցեան, Սամբոլեան, Հալաբեան, Շամլեան, Իգլիլեան, Խիվեան, Ապարալեան, Օրսուեան, Տրապիզոնցեան, Բաղեցեան, Պայպուրբեան, Երեւանցեան, Անեմեան (աճէ՛մ նշանակում է պարսիկ. երբ Կովկասը պարսից իշխանութեան տակն էր, ով որ այս կողմերից գաղթում էր Կաստանդուպոլիս, Տաճկաստան, Կոչուում էր Անեմեան, իբր պարսկահայ). մեր դասախո-

սական կազմում ունենք Ալուզուցեան. Ալ ուզում ասպետակ խաղող անունով մի գիւղ է եղել, զաղթել են այդ գիւղից և ստացել այս մակդիրը:

Ազգանունների չորրորդ ձեւն է արհեստի անունով ազգանուն. սա շատ մեծ թիւ է կազմում և ուժորական է յատկապէս տաճկահայոց մէջ. օրինակ՝ Ոսկերչեան, Գուլումեան, Զարգարեան, Արծապետեան, Հեփիմեան, Սիլայեան, Պերպետեան, Ժամկոչեան, Սուրեան, Քեպուցեան, Թոմմանեան, Տեպեան, Զիլիգարեան, Նալպետեան, Մեհանգեան, Զուռնեան, Սապունեան, Հիւսեան, Գուրգարեան, Պոսնիկեան, Ասեան, Խալիփախչեան, Պոյանեան, Ներկարարեան, Կրասիլիկեան, Գեմիլեան, Խասապեան, Քերեսեան:

Արանք էլ բնահանրապէս թուրքերէն են. մի քանիսը միայն հայերէն են:

1900-ական թուականներին, Համիտեան պեթիմի հայահալած արշաւանքի ժամանակ, երբ Եւրոպայի հասարակական գործիչները ոմանք սկսել էին վերուժել հայկական հարցը և որոնել նրա բուն պատճառը, կային նրանց մէջ այնպիսի չարամիտ կաշառուած մարդիկ, որոնք հայերին մեղադրում էին, որ նրանք վաճառական ժողովուրդ են: Այդ անարդար բացատրութեան ժամանակ գտնուեց Փրանսացի մի գրող. Pierre Quillard, որ "Pro Armenia" թերթում մի յօդուած գրեց այդ առթիւ: Նա ասաց. «Այսպիսի է այն կարծիքը, թէ հայերը վաճառական ժողովուրդ են և ապրում են ուրիշներին շահագործելով: Այո՛, կան հայոց մէջ վաճառականներ, բայց ժողովրդի մեծամասնութիւնը գիւղերում երկրագործ և քաղաքներում արհեստաւոր է»: Արան իբրև ապացոյց մէջ է բերում մի ցանկ այդ չորրորդ կարգի ազգանունների, ինչպէս յիշեցի ես էլ: Ենկելով այն տեսակէտից, որ ազգանունը առնուազն մի քանի ճարտար տարիներին հնութիւն ունի, նա հաստատում է այն միտքը, թէ հայերը արհեստաւոր են և եղել են միշտ՝ տաճկական տիրապետութեան երկար շրջանում: Այսպէս անա ազգանունների քննութեան հասարակ առիթը օգտագործուում է ընկերական և հասարակական երեւոյթների բացատրութեան համար:

(Վերջ՝ 4) ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԱՆ